Նախագիծ

Պ-527-07.03.2023-ԳԿ-011 Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածում.

1) 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Խորհրդում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երեքից:»

2) 5-րդ մասում
   ա. 7-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:
   բ. լրացնել նոր՝ 8-րդ կետ.

«8. Անձինք, ում ընտրվելու դեպքում կխախտվի սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված յուրաքանչյուր սեռի ներկայացվածության պահանջը:»

Հոդված 2. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասում «հեղինակավոր մասնագետ է» բառերից հետո լրացնել «ում ընտրվելու դեպքում չի խախտվի սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր սեռի ներկայացվածության պահանջը:» նախադասությունը:

Հոդված 3. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում.

1) հանել «սեռային ներկայացվածությամբ» բառերը,
2) «ժամկետով» բառից հետո լրացնել «:Կարգավորող պետական մարմնում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երեքից:» նախադասությունը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածում.

3) 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Խորհրդում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի ~~երկուսից~~ երեքից:»

~~4)~~ 5-րդ մասում ~~լրացնել նոր՝ 8-րդ կետ~~.

ա. 7-րդ կետում <<:>> կետադրական նշանը փոխարինել<<.>> կետադրական նշանով:

բ. լրացնել նոր՝ 8-րդ կետ.

«8. Անձինք, ում ընտրվելու~~ության~~ դեպքում կխախտվի սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված յուրաքանչյուր սեռի ներկայացվածության պահանջը:»

Հոդված 2. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասում «հեղինակավոր մասնագետ է» բառերից հետո լրացնել «ում ընտրվելու~~ության~~ դեպքում չի խախտվի սույն ~~հոդված~~օրենքի~~ի~~ ~~2-րդ~~ 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր սեռի ներկայացվածության պահանջը:» նախադասությունը:

Հոդված 3. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում.

3) հանել «սեռային ներկայացվածությամբ» բառերը,
4) «ժամկետով» բառից հետո լրացնել «:Կարգավորող պետական մարմնում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի ~~երկուսից~~ երեքից:» նախադասությունը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-527-07.03.2023-ԳԿ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Զարուհի Բաթոյան	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում	«երկուսից» բառը փոխարինել «երեքից» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Զարուհի Բաթոյան	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում	«երկուսից» բառը փոխարինել «երեքից» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում	23-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Վերանայել օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասում յուրաքանչյուր սեռի ներկայացվածության պահանջի վերաբերյալ դրույթը:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետում	«սեռի ներկայացվածությամբ» բառերը փոխարինել «սեռային ներկայացվածությամբ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետում	«ժամկետով» բառից հետո «՝» կետադրական նշանը փոխարինել «:»	Ընդունվել է	Ընդունվել է

			կետադրական նշանով:		
7.	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	Նախագծում «ընտրության» բառերը փոխարինել «ընտրվելու» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է